**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

*0010 Երևան, Վ.Սարգսյան 3/8, հեռ. 594-004*
*Էլ. փոստ info@moj.am*

//8831-2022
«1» մարտի 2022թ.

**ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՊԱՐՈՆ ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ պարոն Սանոսյան,**

ՀՀ վարչապետի 27.01.2022 թվականի թիվ 111-Ա որոշմամբ ձևավորվել է Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը, ինչպես նաև հաստատվել է խորհրդի անհատական կազմը և գործունեության կարգը:

Խորհրդի առաջնային նպատակն է՝ որոշել բարեփոխումների ուղղությունները և դրանց հիման վրա կազմակերպել սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի, ապա նաև՝ Սահմանադրության փոփոխությունների նախագծի մշակումը:

Կարևորելով հանրության կարծիքը և մասնակցությունը սահմանադրական բարեփոխումների ուղղությունների որոշման գործընթացում՝ հայցում ենք Ձեր աջակցությունը Սահմանադրական բարեփոխումների Խորհրդի կողմից իրականացվող հանրային հարցման մասին հանրության լայն շերտերին տեղեկացնելու հարցում:

Նկատի ունենալով հիշյալը՝ խնդրում ենք տարածել այն տեղական ինքնակառավարման մարմինների շրջանակներում և հրավիրել հանրության ուշադրությունը Սահմանադրական բարեփոխումների Խորհրդի կողմից իրականացվող հանրային հարցմանը:

Տեղեկացնում ենք նաև, որ Սահմանադրական բարեփոխումների ուղղությունների հետ կապված առաջարկությունները և կարծիքները՝ կից ձևաչափին համապատասխան, կարելի է ներկայացնել մինչև ս.թ. մարտի 31-ը՝ ուղարկելով constitutional@moj.am հասցեին:

Կից ներկայացնում ենք սահմանադրական բարեփոխումների ուղղությունների վերաբերյալ առաջարկների ձևաչափը:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

3/2/2022

X

Karen Andreasyan

**ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Կատարող՝ Էմմա Պետրոսյան
ՀՀ ԱՆ «Օրենսդրության զարգացման և
իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամ
Հեռ. (010) ) 594-063